ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԵՆԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-3

ք. Երևան «04» հունվար 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարությունն, ի դեմս՝ **գլխավոր քարտուղար Նունե Խաչատրյանի**, որը գործում է նախարարության աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **<ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ն**, ի դեմս Ընկերության տնօրեն **Ա. Մանուչարյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տաս) աշխատանքային օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ,ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտել նէական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 (տաս) աշխատանքային օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **140632 (հարյուր քառասուն հազար վեց հարյուր երեսուներկու)** ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Վաճառողը հանձման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո՝ Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված

---

[1] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ արդարադատության նախարարությունՔ.Երևան, Վ.Սարգսյան 3/8	<ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ> ՍՊԸ
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Հասցե՝ Քաղ. Երևան, Ավան 4/14
Հ/Հ՝ 900011021921	Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
ՀՎՀՀ՝ 02506264	Հ/Հ՝ 1570020377270100
	ՀՎՀՀ՝ 00888954
Ն.Խաչատրյան	Ա.Սահակյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N
«04» հունիսի 2019թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ -ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի									Մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը և ապրանքային նշանը	արտադրողը և ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
4	30192 121/3	4 գրիչ գնդիկավոր, Shangal	Shangal, Չինաստան	Գրիչ գնդիկավոր,կապույտ գրող,ծայրը՝ 0.5մմ, առանձնացող թափանցիկ կափարիչով,բռնելու մասը՝ ռետինապատ, գրիչի հիմնական գույնը՝ թափանցիկ, հետին ծայրը՝ պլաստմասե առանձնացվող՝ մուգ կապույտգույնի, առջևի ծայրը՝ մետաղական՝ .նիկել ապատ:	հատ	31.35	15675	500	500	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 150 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 150 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 200 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց օրվանից մինչև 20.09.2019թ.
5	30234 300/2	5 դատարկ սկավառակ,	Չինաստան	Դատարկ սկավառակ, առանց տուփի, CD՝ պոլիէթիլենային	հատ	82.5	8250	100	100	Ք.Երևան, Վ.Սարգ	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝

		առանց տուփի, CD		պաշտպանիչ ֆայլով:						սյան 3/8	1) 30 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 30 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 40 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
10	30199 238/3	10 նամակի ծրար, A6 ձևաչափի, Libra	Libra, ԱՄԷ	Ծրար՝ ամբողջությամբ թղթյա, թղթի խտությունը՝ առնվազն 120 գ/մ^2, ինքնասոսնձվող փակվող, միատոն սպիտակ գույնի, չափսը՝ 225x115մմ, փաթեթավորված՝ 50-ական՝ թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով:	հատ	8.8	13816	1570	1570	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 500 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 500 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 570 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
12	30197 232/3	12 թղթապանակ, արագակար, թղթյա	Հայաստան	Թղթապանակ, արագակար, ստվարաթղթե, մետաղական կարիչով, նախատեսված A4չափի թղթերի համար: Ստվարաթղթի խտությունը՝ ոչ պակաս քան 400գ/քմ: Ստվարաթղթի	հատ	49.5	24750	500	500	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 150 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 150 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու

				դիմերեսի սպիտակությունը՝ ոչ պակաս 120%-ից (CIE համակարգով): Չափսերը՝ 225x320x25մմ: Դիմերեսին գրված <ԱՐԱԳԱԿԱՐ>:							օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 200 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
15	**30192 128/2**	**15 գրիչ գելային, Office Space**	**Office Space, ՌԴ**	Գրիչ գելային,կապույտ գրող,ծայրը՝ 0.5մմ, առանձնացող թափանցիկ կափարիչով,բռնելու մասը՝ ռետինապատ, գրիչի հիմնական գույնը՝ թափանցիկ, հետին ծայրը՝ պլաստմասե առանձնացվող՝ մուգ կապույտգույնի, առջևի ծայրը՝ մետաղական՝ նիկելապատ:	հատ	**88**	**17600**	**200**	**200**	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 60 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 60 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 80 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
18	**30199 400/4**	**18 սոսնձապատված կամ կպչուն թուղթ, Index**	**Index, ՌԴ**	Թուղթ ինքնասոսնձվող եզրով,տրցակներով՝ 100-ական շերտ տրցակում,թուղթը՝ բաց-դեղին միատոն գույնի: Չափը՝ 7.6x12.3սմ: Փաթեթավորված թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով:	հատ	**38.5**	**3850**	**100**	**100**	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 30 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 30 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 40 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

											20.09.2019թ.
24	30192 114/3	24 թանաք, կնիքի բարձիկի համար, Huhua	Huhua, Չինաստան	Թանաք՝ կնիքի բարձիկի համար՝ սրվակներով, թանաքը՝ կապույտ գույնի, սրվակում՝ առնվազն 30մլ:	հատ	110	1100	10	10	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում:
28	30197 233/3	28 թղթապանակ, թելով, թղթյա	Հայաստան	Թղթապանակ, թելով կապվող, թղթյա, նախատեսված A4չափի թղթերի համար: Ստվարաթղթի խտությունը՝ ոչ պակաս քան 400գ/քմ: Ստվարաթղթի դիմերեսի սպիտակությունը՝ ոչ պակաս 120%-ից (CIE համակարգով): Չափսերը՝ 220x315x15մմ:Դիմերեսին գրված <ԹՂԹԱՊԱՆԱԿ>:	հատ	60.5	18150	300	300	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 80 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 80 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 140 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 20.09.2019թ.
30	30192 720/3	30 գծանշիչ, Office Space	Office Space, ՌԴ	Գծանշիչ մարկեր՝ ընդգծող, տարբեր գույների: Արտադրման տարեթիվը՝ 2019թ.:	հատ	88.82	4441	50	50	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 15 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 15 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 20 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև

											20.09.2019թ.
33	30199 232/3	33 նամակի ծրար, A4 ձևաչափի, Libra	Libra, ԱՄԷ	Ծրար՝ ամբողջությամբ թղթյա, թղթի խտությունը՝ առնվազն 120 գ/մ^2, ինքնասոսնձվող փակվող, միատոն սպիտակ գույնի, չափսը՝ 229x324մմ, փաթեթավորված՝ 50-ական՝ թափանցիկ պոլիէթիլենային թաղանթով:	հատ	33	33000	1000	1000	Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8	Մատակարարումն ըստ հետևյալ խմբաքանակների՝ 1) 300 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց օրվանից հաշված 20 օրացուցային օրվա ընթացքում, 2) 300 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց օրվանից մինչև 10.07.2019թ. 3) 400 հատ՝ Պայմանագրի ուժի մեջ մտնելուց օրվանից մինչև 20.09.2019թ.

ԳՆՈՐԴ
ՀՀ արդարադատության նախարարությունը Ք.Երևան, Վ.Սարգսյան 3/8
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011021921
ՀՎՀՀ՝ 02506264

----------Ն.Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
<ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ> ՍՊԸ
Հասցե՝ Ք. Երեւան, Ավան 4/14
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020377270100
ՀՎՀՀ՝ 00888954

----------Մանուչարյան
/ստորագրություն/
Կ.Տ

«ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ»
"КРОМА ГРУП"
"CROMA GROUP"
00888954

Հավելված
«04» 2019թ. կնքված
ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
4	30192121/3	4 գրիչ գնդիկավոր, Shangal	-	-	-	-	-	5486	9405	9405	9405	15675	15675	15675	15675
5	30234300/2	5 դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	-	-	-	-	-	2887.5	4950	4950	4950	8250	8250	8250	8250
10	30199238/3	10 նամակի ծրար, A6 ձևաչափի, Libra	-	-	-	-	-	4835	8289	8289	8289	13816	13816	13816	13816
12	30197232/3	12 թղթապանակ, արագակար, թղթյա	-	-	-	-	-	8662.5	14850	14850	14850	24750	24750	24750	24750

15	30192128/2	15 գրիչ գելային, Office Space	-	-	-	-	-	6160	10560	10560	10560	17600	17600	17600	17600
18	30199400/4	18 սոսնձապատված կամ կպչուն թուղթ, Index	-	-	-	-	-	1347.5	2310	2310	2310	3850	3850	3850	3850
24	30192114/3	24 թանաք, կնիքի բարձիկի համար, Huhua	-	-	-	-	-	385	660	660	660	1100	1100	1100	1100
28	30197233/3	28 թղթապանակ, թելով, թղթյա	-	-	-	-	-	6352.5	10890	10890	10890	18150	18150	18150	18150
30	30192720/3	30 գծանշիչ, Office Space	-	-	-	-	-	1555	2664	2664	2664	4441	4441	4441	4441
33	30199232/3	33 նամակի ծրար, A4 ձևաչափի, Libra	-	-	-	-	-	11550	19800	19800	19800	33000	33000	33000	33000
Ընդամենը`			-	-	-	-	-	49221	84378	84378	84378	140632	140632	140632	140632

ԳՆՈՐԴ

ՀՀ արդարադատության
նախարարություն Ք. Երևան, Վ.Սարգսյան
3/8
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ՝ 900011021921
ՀՎՀՀ՝ 02506264

Ն.Խաչատրյան
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Հասցե՝ Ք. Երեւան, Ավան 4/14
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020377270100
ՀՎՀՀ՝ 00888954

Մանուչարյան
/ստորագրություն/

«ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ»
"КРОМА ГРУП"
"CROMA GROUP"
00888954

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-3
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «04» հունվար 2019թ.

<ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն **Ա. Մանուչարյանի**, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

Ընկերությունը մասնակցում է ՀՀ **արդարադատության նախարարության** (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված **ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6** ծածկագրով գնման ընթացակարգին:

1.1 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ <<Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների>>:

1.2 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը (այսուհետ՝ պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիր) ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին (այսուհետ՝ Բանկ)՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը:

1.3 Բանկը պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը ընդունում է կատարման՝ Պատվիրատուի կողմից սույն տուժանքի համաձայնագրի և գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման փաստը հաստատող փաստաթղթի բնօրինակները, որոնք նշվում են պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում, Բանկին տրամադրվելու դեպքում:

1.4 Պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) համար Բանկը պատասխանատվություն չի կրում:

1.5 Սույն համաձայնագիրը և կից պայմանագրի կատարման ապահովման վճարման պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱԲՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և վավեր է Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

<ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ> ՍՊԸ
Հասցե՝ ք. Երեւան, Ավան 4/14
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ՝ 1570020377270100
ՀՎՀՀ՝ 00888954

Տնօրեն՝ ----------Ա. Մանուչարյան
/ստորագրություն/

«ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ»
"КРОМА ГРУП"
"CROMA GROUP"
00888954

Կ.Տ

1. ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ[2]

2. Թիվ ՀՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-19/6-3

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ____ 20___ թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝ <ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ> ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ

6. Վճարողի հաշվի համարը՝ 1570020377270100

7. Վճարողի ՀՎՀՀ՝ **00888954**

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը՝ **ՀՀ արդարադատության նախարարություն**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02506264**

12. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ կենտրոնական գանձապետարան**

13. Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**

14. Գումարը (թվերով և բառերով)՝ **14063 (տասնչորս հազար վաթսուներեք)**

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16. Արժույթը (բառերով և կոդով)՝ **ՀՀ դրամ, AMD**

17. Գործարքի (վճարման) նպատակը՝ *պայմանագրի կատարման ապահովման համար*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ ակցեպտավորված վճարում

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները

/________________/

/________________/

22.բ. Կ.Տ.

21.ա. Վճարողի ստորագրությունները՝

/________________/

/________________/

21.բ. Կ.Տ.

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/________________/

/ստորագրություն/

24.բ. Կ.Տ.

24.գ "___" ___ 20___ թ.

23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն

/________________/

/ստորագրություն/

23.բ.

23.գ. Կատարման ամսաթիվ
20___ թ.

«ԿՐՈՄԱ ԳՐՈՒՊ» "КРОМА ГРУП" "CROMA GROUP" 00888954

---

2 *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*